ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ԵԼՈՒՅԹՆԵՐԸ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1886—1887 ԹԹ.

ՎԱՉԵ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

XIX դ. երկրորդ կեսի արևելահայ գյուղացիական շարժումների մեջ առանձնանում են 1886—1887 թթ. գյուղացիական ելույթները։

Ոստիկանության դեպարտամենտի կազմած մի տեղեկագրի համաձայն՝ 1881 թ. հունվարից մինչև 1888 թ. մայիսը Ռուսաստանում տեղի են ունեցել 332 գյուղացիական «անկարգություններ»[1]։ Անշուշտ, գյուղացիական ելույթների թիվն անհամեմատ մեծ է եղել, սակայն տվյալ տեղեկագրում առանձնացվել են առավել նշանակալից դեպքեր, որոնք ունեցել են ընդգծված «քաղաքացիական և քրեական բնույթ»։ Գյուղացիական ելույթները, որոնք պաշտոնապես որակավորվում էին որպես «անկարգություններ», ըստ այդ տեղեկագրի՝ տեղի են ունեցել Ռուսաստանի 61 նահանգներում ու մարզերում։ Անդրկովկասյան նահանգներից ու մարզերից միայն Երևանի նահանգն է հիշատակվում այդտեղ[2]։ Ցարական իշխանությունները նկատի ունեին 1887 թ. մարտին Երևանի նահանգի Նոր Բայազետի գավառի Գյոլ գյուղի բնակիչների ելույթը, որոնք լուրջ դիմադրություն էին ցույց տվել իշխանության ներկայացուցիչներին[3]։

Ցարական կառավարությունը 1887 թ. պարտադիր զինապարտության օրենքը տարածեց նաև Անդրկովկասի քրիստոնյա բնակչության վրա։ Դա ցարիզմի սոցիալական շահագործման և ազգային ճնշման դեմ կուտակված մասսայական դժգոհության առիթ հանդիսացավ։ Երկրամասի տարբեր անկյուններում տեղի ունեցան գյուղացիական հուզումներ, որոնք դրսևորվեցին նաև արևելահայ գյուղում։ Դրանց թվին է պատկանում Գյոլ գյուղի բնակիչների ելույթը, որի վերաբերյալ մանրամասն տեղեկություններ կան արխիվային փաստաթղթերում[4]։

1887 թ. մարտի 8-ին զինակոչիկների ցուցակը կազմելու նպատակով Գյոլ գյուղն է ժամանում գավառապետի օգնական Օլխովսկին։ Գավառապետի օգնականի ժամանման լուրն առնելով՝ ժողովուրդը շրջապատում է տանուտերի տունը, որտեղ իջևանել էր նա և այն քարկոծում։ Գավառապետի օգնա-

---

[1] Центральный Государственный архив Октябрьской революции (այսուհետև՝ ЦГАОР), ф. ДП, 2-е д-во, 1889 г., д. 34, ч. 44, л. 8.

[2] Նույն տեղում, թ. 9։

[3] Նույն տեղում, թ. 75։

[4] Центральный Государственный исторический архив СССР (այսուհետև՝ ЦГИА СССР), ф. 1405, оп. 88, д. 6057; ЦГАОР, ф. ДП, Еженедельные записки, 1887 г. д. 11, л. 184—185, ф. ДП, 3-е д-во, 1887 г., д. 215, лл. 1—3.

կանի միջամտությունը ոչ մի ներգործություն չի ունենում։ Գյուղացիները գանակոծում են նրան։ Գյոլ գյուղի բնակչության ըմբոստացման լուրն անմիջապես Թիֆլիս է հասնում, մի քանի հոգի բանտարկվում են։ Գյուղացիական այս ելույթն իր վրա է հրավիրում նաև ներքին գործերի և արդարադատության մինիստրների ուշադրությունը[5]։

Անդրկովկասում պարտադիր զինապարտության օրենքի տարածման ուղղությամբ ցարական կառավարության նախապատրաստական աշխատանքները սկսվել էին դեռևս 1880-ական թվականների սկզբներին։ Այդ աշխատանքները գլխավորում էր Կովկասի կառավարչապետը, որը հաճախակի հրավիրվող խորհրդակցություններում նահանգապետների ուշադրության կենտրոնում մշտապես պահում էր «անկարգությունների» ծագման դեպքում ոստիկանության գործելակերպի հարցը[6]։

Տեղական իշխանությունների ներկայացուցիչներն իրենց գործունեությամբ արագացրին գյուղացիների ելույթը։ Ծխամատյանների և բազմապիսի ցուցակների կազմումն ու ստուգումն ընթանում էր կեղծիքի, կաշառակերության, չարաշահումների պայմաններում։ Երևանի նահանգային ժանդարմական վարչության պետն իր ղեկավարությանն ուղղած զեկուցագրում ստիպված էր ընդունել, որ ժողովրդի դժգոհության և անկարգությունների պատճառը զինակոչիկների ցուցակների սխալ կազմելն էր[7]։

Արխիվային նյութերը լույս են սփռում զինապարտության օրենքի տարածման թե՛ նախօրեին և թե՛ հետո Արևելյան Հայաստանի ամենատարբեր շրջաններում տեղի ունեցած գյուղացիական ելույթների վրա, որոնք իրենց ընդդրկմամբ գերազանցում են Գյոլ գյուղի ելույթը։

Ռուսաստանում տեղի ունեցող նշանավոր իրադարձությունների վերաբերյալ կայսրին ներկայացվող մի ամփոփագրից տեղեկանում ենք, որ 1886 թ. հունիսին Ելիզավետպոլի նահանգի Զանգեզուրի գավառի Խոտ, Շինուհայր, և Տաթև գյուղերի բնակիչները դիմագրավել են իշխանության ներկայացուցիչներին, որոնք ժամանել էին ծխամատյանները ստուգելու և զինակոչիկների նախնական ցուցակները կազմելու նպատակով[8]։

Շինուհայր գյուղի բնակիչները փակել էին գյուղ տանող ճանապարհը և կողքի բարձրունքներից քարեր էին նետում աստիճանավորների և հեծյալների վրա։ Նրանք գյուղի տանուտերից խլել էին կնիքը, զրկել նրան ավագության իրավունքներից և երդվել հիմնահատակ անել այն տունը, որտեղից դավաճան դուրս կգա[9]։ Իսկ Տաթև գյուղում կանայք հարձակվելով հեծյալների և կազակների վրա, փորձել էին ծեծել նաև գավառապետի օգնականին։ Ելիզավետպոլի նահանգապետն անմիջապես դիմում է երկրամասի զինվորական հրամանատարությանը և խնդրում իրեն տրամադրել կազակների ու հետևակայինների մեկական հարյուրյակ, որոնց հետ նա շտապում է Գորիս։ Բազմաթիվ գյուղացիներ բանտարկվում են[10]։

Ոստիկանության դեպարտամենտի դիրեկտորը միաժամանակ տեղեկաց-

---

5 Նույն տեղում, ֆ. 1405, ց. 88, գ. 6057, թ. 3—6։

6 Նույն տեղում, ց. 92, գ. 8943, թ. 2։

7 ЦГАОР, ф. ДП, 3-е д-во, 1888 г., д. 89, ч. 53, л. 9.

8 Նույն տեղում, Еженедельные записки, 1886 г., д. 10 б, л. 3—4.

9 Նույն տեղում, թ. 3։

10 Նույն տեղում, թ. 4։

նում է Ալեքսանդր III-ին, որ Ելիզավետպոլի նահանգապետի հսկողության ներքո այդ գործի կապակցությամբ վարչական մանրազննին հետաքննություն է կատարվում[11]։

1886 թ. իշխանության ներկայացուցիչներին բացահայտ դիմադրություն են ցույց տալիս նաև Կարսի մարզի Կաղզվանի օկրուգի մի շարք գյուղերի բնակիչներ։ Մասսայական հուզումները վերացնելու համար օկրուգի պետը Կարսի նահանգապետին խնդրում է զորք ուղարկել[12]։ Երևանի նահանգային ժանդարմական վարչության պետի տեղակալը ոստիկանության դեպարտամենտին տեղեկացնում է, որ Կարսի մարզի օկրուգային և տեղամասային պետերը ժողովրդի մեջ դրական ոչ մի աշխատանք չեն կատարել, զինապարտության օրենքի հետ կապված հարցերը չեն բացատրել, իսկ Կաղզվանի օկրուգի պետը բավարարվել է միայն ցինիկաբար հայտարարելով. «Դեհ, այժմ ես ձեզ բոլորիդ զինվոր կվերցնեմ»[13]։

1887 թ. զինապարտության օրենքի տարածման կապակցությամբ ցարիզմի դեմ ուղղված գյուղացիական ելույթներ տեղի ունեցան նաև Երևանի նահանգի մի շարք այլ գյուղերում։ Կովկասի կառավարչապետը Պետերբուրգ ուղարկած հեռագրում նշում է, որ նոյեմբերի 2-ին Էջմիածնի գավառի Վաղարշապատ գյուղում տեղի են ունեցել խոշոր անկարգություններ[14]։

Նոր Բայազետի գավառի Գյոզալդարա գյուղում հուզումներն ավելի բուռն են դրսևորվում։ 1887 թ. նոյեմբերի 9-ին հարևան գյուղերից հավաքված մոտ 5000 հոգի լուրջ դիմադրություն են ցույց տալիս զինվորական ատյանի անդամներին և գավառապետին[15]։ Ամբոխը քարկոծում է այն տունը, որտեղ պատսպարվել էին զինվորական ատյանի անդամները և գավառապետը։ Վերջինս փորձում է հանգստացնել ժողովրդին, սակայն գյուղացիներն աղմուկաղաղակով հայտնում են, որ ոչ մի զինվոր չեն տա։ Կազակների կրակոցից հետո ամբոխն աստիճանաբար ցրվում է։ Զինվորական ատյանի անդամները հաշվի առնելով իրենց անբավարար պաշտպանունակությունը (10 կազակ և 12 չապար) նոր ընդհարումից խուսափելով՝ վերադառնում են Նոր Բայազետ[16]։

Գյուղացիական այս ելույթն անմիջապես իր վրա է բևեռում իշխանությունների ուշադրությունը։ Նոր Բայազետ են շտապում Երևանի նահանգապետ, գեներալ լեյտենանտ Շալիկովը, օկրուգային դատախազը, նահանգային ժանդարմական վարչության պետը և ուրիշներ։ Նրանց միջամտությամբ միայն նոյեմբերի 14-ին հնարավոր է լինում կազմել զինակոչիկների ցուցակը[17]։ Երևանի նահանգապետը Կովկասի կառավարչապետին տեղեկացնում է, որ Գյոզալդարայի հուզումների առաջացմանը նպաստեցին այն թերություններն ու անկազմակերպվածությունը, որոնք տեղ էին գտել գավառապետի ու զինվո-

---

11 Նույն տեղում, թ. 29։

12 Նույն տեղում, 3-е д-во, 1887 г., д. 9, ч. 32, л. 13—14. Տե՛ս նաև «Всеподданейший отчет о состоянии Карсской области за 1886 год». Карс, 1888. стр. 45—49.

13 ЦГАОР, ф. ДП, 3-е д-во, 1887 г., д. 9, ч. 32, л. 14.

14 Նույն տեղում, գ. 650, թ. 1, 6։

15 ЦГИА СССР, ф. 1405, оп. 88, д. 6788, л. 1, տե՛ս նաև А. Амбарян, Развитие капиталистических отношений в армянской деревне, Ереван, 1959, стр. 226.

16 ЦГИА СССР, ф. 1405, оп. 88, д. 6788, л. 6—8.

17 Նույն տեղում, թ. 5, 9։

ական ատյանի աշխատանքներում՝ մասնավորապես գյուղացիական դիմումներին ժամանակին չպատասխանելը, օրենքի հետ բնակչությանը լավ չծանոթացնելը և այլն[18]։ Առավել ակտիվություն ցուցաբերած գյուղացիների նկատմամբ քրեական հետաքննություն է սկսվում[19]։

Գյոդալդարա գյուղի բնակիչները, անշուշտ, լսել էին իրենց գավառի Գյոլ գյուղի մարտյան դեպքերի մասին։ Դա նրանց ավելի համարձակ էր դարձրել։ Եվ կարծես նման դեպքերը նկատի ուներ ցարական աստիճանավորներից մեկը, որը 1888 թ. գրում էր. «Իրենց այժմյան չափերով գյուղացիական անկարգությունները պետությանը դեռևս չեն սպառնում բացառիկ վտանգով, բայց նրանց բնորոշ որոշ հատկությունների վրա, այն են՝ վարակչությունն ու համառությունը, ուշադրություն պետք է դարձնել հենց այժմ, կանխապես... Գյուղացիական անկարգությունները տարեցտարի գրավում են նորանոր վայրեր և այս կամ այն չափով ամրապնդվում այնտեղ»[20]։

Նոր Բայազետի գավառապետը Գյոլ և Գյոդալդարա գյուղերի դեպքերի կրկնվելուց խուսափելու, ինչպես նաև զինվորական ատյանի անդամների անվտանգությունն ապահովելու նպատակով 1887 թ. նոյեմբերին Երևանի նահանգապետից խնդրում է կազակներ ուղարկել Ներքին-Ախտա գյուղը[21]։ Նույնպիսի նպատակ էր հետապնդում նաև Երևանի նահանգապետի ժամանելը նահանգի ամենամեծ գյուղերից մեկը՝ Աշտարակ[22]։

Ոստիկանության դեպարտամենտին Երևանի նահանգային ժանդարմական վարչության պետի ուղղած զեկուցագրերից մեկը տեղեկություններ է պարունակում Ալեքսանդրապոլի գավառի Ջաջուռ գյուղում տեղի ունեցած գյուղացիական ելույթի մասին։ 1887 թ. նոյեմբերի 19-ին Ջաջուռում շրջակա 52 գյուղերից հավաքվել էր վիթխարի բազմություն։ Գյուղացիները փորձում են տեսնել զինվորական ատյանի անդամներին, ցանկանում հայտնել իրենց դժգոհությունը զինակոչիկների ցուցակագրման առթիվ, սակայն ոստիկանական աստիճանավորներն արգելում են։ Քարերով ու փայտերով զինված գյուղացիները փորձում են ուժով արդյունքի հասնել, սակայն հանդիպում են նախապես այդտեղ ժամանած կազակների դիմադրությանը։ Գյուղացիներին հնազանդեցնելու համար գավառապետն Ալեքսանդրապոլից լրացուցիչ օգնություն է խնդրում։ Նույն օրը երեկոյան զինվորների մի ամբողջ գումարտակ մտնում է Ջաջուռ։ Զինվորական ատյանի աշխատանքները վերսկսվում են և 11 գյուղացիներ ձերբակալվում են[23]։

Տեղական իշխանության ներկայացուցիչները հնարավորության դեպքում փորձում էին թաքցնել գյուղացիական ելույթի փաստը կամ էլ փոքրացնել վերջինիս նշանակությունը։ Դրանով իսկ նրանք ցանկանում էին փակել տվյալ ելույթի ազդեցության տարածման շրջանակները և, միաժամանակ, չարժա-

---

18 Центральный Государственный исторический архив Груз. ССР *(այսուհետև՝* ЦГИА Груз. ССР), ф. 12, оп. 10, д. 102, л. 3.

19 *Նույն տեղում, թ. 1։ Այս ելույթի մասին տե՛ս նաև* ЦГАОР, ф. ДП, 3-е д-во, 1887 г., д. 650, л. 2—5. *Ի դեպ, գյուղացիական այս ելույթի լուրը հասնում է Պետերբուրգ՝ արդարադատության մինիստրին։ Այդ մասին տեղեկացվում է անգամ Ալեքսանդր III-ին։*

20 ЦГАОР, ф. ДП, 2-е д-во, 1889 г., д. 34, ч. 44, л. 16.

21 *Նույն տեղում,* 3-е д-во, 1887 г., д. 650. л. 9.

22 ЦГИА Груз. ССР, ф. 12, оп. 10, д. 102, л. 14.

23 *Նույն տեղում, թ. 7—8, տե՛ս նաև* А. Амбарян, *նշվ. աշխ., էջ 226։*

նանալ «թույլ հսկողության համար» կշտամբանքների։ Դրա լավագույն օրինակն է էջմիածնի գավառի Սարդարապատ գյուղի 1887 թ. դեկտեմբերի 3-ի զինված դիմադրության դեպքը[24]։

Դեկտեմբերի 3-ին Սարդարապատ գյուղում զինվորական ատյանը ձեռնամուխ եղավ զինակոչիկների ցուցակը կազմելուն։ Աշխատանքները կատարվում էին գյուղամիջյան հրապարակում, որտեղ հավաքվել էր մոտ 3000 մարդ։ Կազակները մտրակների հարվածներով փորձում են ժողովրդին հեռացնել ատյանի անդամներից։ Առաջանում է մեծ իրարանցում։ Գյուղացիները քարեր են նետում կազակների և զինվորական ատյանի անդամների վրա։ Վերջիններս, բոլոր փաստաթղթերը թողնելով այդտեղ, շտապում են թաքնվել։ Ժողովուրդն օգտվում է դրանից և ոչնչացնում բոլոր ցուցակները։ Դրանից հետո գյուղացիները շրջապատում են այն տունը, որտեղ պատսպարվել էին իշխանության ներկայացուցիչները։ Գավառապետ Խան-Աղովը փորձում է դուրս գալ թաքստոցից և հանգստացնել ժողովրդին, սակայն գյուղացիները քարերի նոր տարափ են տեղում և մոտ մեկ ժամ ատյանի անդամները մնում են պաշարված դրության մեջ։ Գյուղացիները փորձում են հրդեհել նրանց թաքստոցը, բայց վրա են հասնում մոտակա գյուղերում գտնվող կազակները և ցրում հրապարակում հավաքված ժողովրդին։ Նման դիմադրության պայմաններում իրենց ներկայությունը վտանգավոր համարելով, զինվորական ատյանի անդամները շտապ հեռանում են գյուղից։ Ի դեպ, ճանապարհին նրանք շրջապատված են լինում կազակներով, որոնք հրացանները պահում էին պատրաստի վիճակում[25]։

Զգտելով փոքրացնել Սարդարապատի դեպքերի նշանակությունը, էջմիածնի գավառապետն իր ղեկավարությանը գրում էր. «Սարդարապատում տեղի են ունեցել փոքր անկարգություններ՝ կազակների անզգույշ գործողությունների հետևանքով։ Այդ պատճառով ես առավել հարմար գտա ատյանի գործունեությունը տեղափոխել Շահրիար։ Աշխատանքներն այժմ ընթանում են, անկարգություններ չկան։ Հանգիստ եղեք, ես հույսով եմ, որ ամեն ինչ կվերջացնենք բարեհաջող։ Համենայն դեպս, վաղվա համար բարեհաճեք ուղարկել ևս 15 կազակներ»[26]։ Գավառապետի վերջին խոսքերը շատ բան են հուշում։

Մի քանի օր անց՝ Սարդարապատի գյուղացիների դիմադրության լուրն իսկական մանրամասներով հասնում է Երևան։ Այն մեծ անհանգստություն է պատճառում ցարական աստիճանավորներին։ Որքան էլ որ էջմիածնի գավառապետը փորձեր տվյալ դեպքը ներկայացնել որպես պատահական երևույթ, այստեղ արդեն նման կերպ չէին կարող մտածել, քանի որ դեռևս շատ թարմ էին Գյոլ, Գյողալդարա, Ջաջուռ և մյուս գյուղերի դեպքերը։ Իշխանության ներկայացուցիչներին դիմադրություն ցույց տալու համար առավել ակտիվություն դրսևորած 9 գյուղացիներ դատի են տրվում[27]։ Գյուղացիական այս ելույթի մասին տեղեկացվում է նաև Ալեքսանդր III կայսրին[28]։

---

24 ЦГИА СССР, ф. 1405, оп. 92, д 8943, տե՛ս նաև ЦГАОР, ф. ДП, 3-е д-во, 1887 г, д. 650. л. 10—11; ЦГИА Груз. ССР, ф. 12, оп. 10, д. 102, л. 18.

25 ЦГИА СССР, ф. 1405, оп. 92, д. 8943, л. 5—8.

26 Նույն տեղում, թ. 10։

27 Նույն տեղում, ց. 88, գ. 6788, թ. 21։

28 ЦГАОР, ф. ДП, Еженедельные записки, 1887 г., д. 12, л. 187—188.

Պարտադիր զինապարտության օրենքի տարածման կապակցությամբ ծագած գյուղացիական ելույթները իշխանություններին բավական մտահոգություն էին պատճառում։ Իրենց թափով ու մասշտաբայնությամբ արևելահայ գյուղացիական շարժումների պատմության մեջ դրանք աննախադեպ էին, և պատահական չէ այն անհանգստությունը, որ ամենամյա զորակոչերի ժամանակ պաշարում էր տեղական իշխանության ներկայացուցիչներին։ Տարիներ անց էլ, նրանք շտապում էին տեղեկացնել իրենց ղեկավարությանը, որ նման «անկարգություններ» չեն եղել։ Ահա թե ինչ է գրում Երևանի նահանգապետը 1891 թ. զեկուցագրերից մեկում. «Զինակոչիկների զորակոչը՝ թվով հինգերորդը, կատարվեց լրիվ կարգ ու կանոնի և հանգստության պայմաններում»[29]։

Գյուղացիական վերոհիշյալ ելույթներն օբյեկտիվորեն ուղղված էին ցարիզմի ինչպես սոցիալական, այնպես էլ ազգային-գաղութային շահագործման դեմ և Արևելյան Հայաստանի գյուղացիական շարժումների պատմության ուշագրավ էջերից են։

КРЕСТЬЯНСКИЕ ВЫСТУПЛЕНИЯ В ВОСТОЧНОЙ АРМЕНИИ В 1886—1887 гг.

ВАЧЕ ОВАКИМЯН

Резюме

С начала 1880-х годов царское правительство вело подготовительные работы в связи с претворением в жизнь закона об обязательной воинской повинности, распространяющегося на все христианское население Закавказья. Закон был опубликован в 1887 г. В течение этого времени чиновники, которые должны были претворить в жизнь закон, на местах совершили ряд серьезных злоупотреблений и ошибок, вызвавших справедливый протест народных масс.

Наиболее бурные крестьянские выступления имели место в селениях Хот, Шинуайр, Татев (Зангезурский уезд), Гёл, Гёзалдара (Новобаязетский уезд), Вагаршапат, Сардарапат (Эчмиадзинский уезд), Джажур (Александропольский уезд) и в Кагызманском округе Карской области.

Крестьянские волнения были направлены против социального и колониального гнета царского правительства.

---

[29] ЦГИА СССР, ф. 1284, оп. 223, д. 188, л. 82.